

ԸՆԴ ՀԱՅԱՍՏԱՆ ՌՈՒՍԻՈՅ

(ՏԵՍ յԷջ 135)

Ե

Հարապաղ. — Շոշի. քաղաքն, քնակիլք, սովորոյթք: — Հայոց եկեղեցի:

ԾՈՒԽԵՒ քաղաքն՝ զրեթէ անդիմամարտելի բնական ամրոց մ'է. 1100 մեղք բարձրութեամբ սպիտակ խիտ կրաքարի հարթ բարձրաւանդակի մը վըրայ շինուած, և շրջապատեալ ի լեռանց: Բարձրաւանդակիս չորս կողմ անմասոյց պարփակ մը կայ, բաց յերկուց կողմանց՝ զոր կը պաշտպանեն երկու դրունց ի վերայ ճանապարհաց Երեւանի և Գանձակյա: Այս վերջնոյս կառավարութեան զինաւոր քաղաքն է Շոշի, հարիւր քանի հազարամետք հեռի դէպ ի հարաւակողմն և յարևելեան հարաւ, և երբեմ մայրաքաղաք Ղարապաղի ինանութեան:

Ղարապաղ՝ Պարսից և Հրեկից հին իրաւան կամ Այրեանն է. Այրարաց՝ Ռան՝ և Այիերանն զենա գրոց: Հին ատեն Արցախի կը կոչուէր, Հայոց Սիւնիք կամ Սիւնական գաւառին մէջ. և Արշակունեաց անկմանէն ետքը՝ Աղուանց միացուցին զայն իրենց թագաւորութեան հետ: Բայց Հայոց թագաւորաց ազգեցութիւնը այնչափ մեծ շեղաւ ի Ղարապաղ, որովհետև իր զիրքսը յարեւանից բաց էր Պարսկաստանի ամէն ժողովրդոց, կասպից ծովուն և կովկասու:

Լանկթամուրի հետ եկող թաթար ժողովրդոց բազմութիւն մը տարածուեր սփուռեր էին երկրին բոլոր երեսին վրայ. բայց նախիշխանութիւնն միշտ Պարսից էր յերկրին: Նատիր շահի իշխանութենէն քիչ յառաջ տիրեցին թաւրքը, թէպէտ և քիչ ժամանակուան համար. որովհետև նատիր շահ միւս անգամ զրաւեց զՂարապաղ, և բունադատեց այն կողմերն բնակութեամբ հաստատուող թաթարներն՝ դառնալ ի խորասան, ուստի եկած էին: Թաթարք ախորժած ըլլալով երկրէն՝ զժկամակութեամբ կը հեռանային, առթի սպասելով կրկին հոն վերադարձի. և որ յաջողեցաւ նատիր շահի մահուամբ:

Երբ երկրան միսանգամ, իրենց առաջնորդ և զլուկ ունէին Զուանշիրի ցեղէն Փանախան անուն Խորասանցի թիւբրձէն մը, որ քիչ յետոյ բացարձակ իշխանութիւն մը միսաւ վարել երկրին վրայ: Իր բնակութիւնն հաստատեց նախ ի Բայսա՛ մերձ ի թերդա, և ապա փոխազդեցաւ ի Շահ-պուլաք:

Փանախան՝ տէր դառնալով Ղարապաղի, իշխանութեան աթոռը հաստա-

տեց հիմակուան Շուշի քաղաքը, որ այն ատեն պարզ միջնաբերդ մ'էր : Առջի բերան Փանապատ կը կուռէր . բայց երբ մերձաւոր Շուշի-քէնդ կոչուած հայ աւանի մը բնակիչք եկան հոն հաստատուեցան , քաղաքն ալ Շուշի կամ Շուշա կոչեցին :

Փանախան մեռաւ ի 1790. և Խպրահիմ որդին յաջորդելով ի 1794 , պաշարուեցաւ ի Շուշի՝ Պարսից Շահ աղա Մուհամմէտ խանէն , որ երբ տեսաւ թէ անկարելի է քաղաքն առնուլ , հրամայեց աւարել զերիիրն : Կրիլին անգամ զառնալով ի գործ արշաւանցն , ի 1795 և 1796 , այս անգամ պատուիրեց Խոյի , Երևանի և Նախիչևանի խաններուն որ բազմաթիւ բանակաւ զօրաց մտնեն յերկիրն : և ժայրէ ծայր աւարեն : իր այս հրամանն կատարուեցաւ . ամբողջ գաւառն ճարակ ըլլալով հրոյ և արեան , բնակչաց շատերն ալ իրրե գերի փաճառեցան : Ղարապաղ՝ տոլց և ամենայն արհաւրաց տիուր տեսարան մը կ'ընծայէր . բնակիչք բոնադասուած էին խոտանարակ ապրիլ , և շատք թողին իրենց հայրենիքն ու գաղթականութեամբ հեռաւոր տեղուանք գնացին :

Այն ատեն աղա Մէհէմմէտ բազմանեռն գնաւ զարձաւ կրկին՝ երրորդ անգամ պաշարել զՇուշի : Խպրահիմ՝ ի փախուստ զարձաւ յերեսաց թշնամյան , քաղաքն առնուեցաւ , և քանակնինք օր աւարի արուելով , Շահի կրցավիշնորութիւնն յագեցրնել : Բայց այշագի եղերունք չէին կրնար անպատուհաս մնալ . ինք Շահն ալ՝ իր ժառայից մէկուն սրոյ հարուածովը կեանքը կորսնցուց :

1804ին թուաք տիրեր էին կէնճէտ խանութեան՝ որ Պարսից հպատակութեան տակն էր : Խպրահիմ՝ ինքզինքը շատ տկար գանելով այնքան մեծազօր պետութեան մը դէմ՝ յաջորդութեամբ կուռէլու , 1804ին եկա գանել զիեցիանով զօրավար , որ զօրքովը բանակած էր յափունս Գուրաբ-շայի . իրն զիեց որ Ռուսաց պաշտպանութեան տակ ընդունի զՂարապաղ , և թէ կը հըսածարէր Պարսից իր վրայ ունեցած գերիշխանութենէն : Դաշնադրութիւնն մը կնքեցաւ մէջերնին ի 1805 ի 14 մայիսի , որով Ռուսաք տէր եղան Շուշի բերդին : Վրան քանի մը տարի անցնելէն եաբը , երբ Խպրահիմ և իր որդին Մէհէմմէտ-գուլի-խան կրկին ապատամբութեան փորձ մը ըրին , Ռուսք մերկացուցին զիբենք յիշխանութենէ և հաստատապէս զրաւեցին զերկիրն (1822) :

Զորա տարի ետքը՝ Ապապա Միրզա առանց նախընթաց պատերազմի յայտարարութեան վազեց երկրին վրայ ու պաշարեց զՇուշի : Ամրապահ զօրքն՝ որ միայն քանի մի հարիւր հոգուով բաղկացած էին՝ Ռէւզ գնդապետին հըրամանասարութեան տակ , քառասուն և հինգ օր արիաբար պահպանելով ըզբերքն , նաև ուտելեաց պակասութեամբ , վանեցին յարձակումը :

28 մայիս . Հեղեղզարար անձրեւի մը տակ՝ ի ինսպիր կ'ելլենք այն անձանց որոց վրայ յանձնարարական զիր ունեինք , և նախկին ակնարկ մը ձըզելու քաղաքին վրայ , ուր միտք ունենք շատ օր կենալ . որովհետեւ ի Շուշի կարգի պիտի գնենք մեր կարաւանիք :

Յուները՝ քաղաքին դրից բարձրութեան, և ի ձմերան տեղացած ձեան առառութեան համար, վլյուրանակ տանիք ունին, ինչպէս ի շեռնակողման Գաղղիոյ, ու ներկուած տախտակօք կամ երկաթի կուածոյ թիթեղամբ ծածկուած են. ամուր կերպով շինուած, և ինչ որ մասնաւոր նշանակութեան արժանի է, ճնիք տախտարկէ կամ երկաթի վանդակապատօք, որովք ծածկուած են զրեթէ ամէն պատուհաննք, գեղեցիկ արուեստակերսեալք, ինչպէս են նաև պատշգամք՝ որ կը գրաւեն բոլվանդակ տանն երեսին երկայնութիւնը։ Այս վերջիններս մերթ զարդարուած են նաև պարսկական նաշակի համեմատ նը-կարներով։

Շուշիի բնակչաց մեծ մասը թաթարք են, և ՚ի ցածագյն կողմանս քաղցին հաստատուած բնակութեամբ. ուր Հայք վերին մասը կը գրաւեն, գաղթական թուուց հետ որ սակաւաւորք են՝ թուով։

Դժուարին է ճիշգ գազափար մը ունենալ քաղաքիս նկատմամբ, չորս այլ և այլ բլոց կողերուն վրայ շինուած ըլլալով։ ինկ արուաքին տեսին աւելի երպարկան է քան ասիացի, տանեացը և տանց շինութեան համար գործածուած նիւթոց պատճառաւ։ կյիմային խստութիւնը հոչակուած է ընդ ամենայն կոլիսա. զի Ճմեռն վեց ամիս կը տեսէ, և ձիւնն ինչուան մեզ մը բարձրանալով, փողոցաց մէջ ասնակալ կը շրջին։ ինչուան ի մայիս կը ձիւնէ երեսմ. որով ի Շուշի շերմութիւնը սասակի շըլլար, և հասուցած պատշաճն են՝ կեռաւ, սալոր, ինձոր և տանձ։

Ամենափեղճ կերպով սալարկուած զառ ի վեր ճամբաներն՝ յաճախ յաճա-րեւաց լուացուելով՝ հեղեղատի երեսաց կերպարանք մը կ'առնուն. և թէ-պէտ ընտափի քարինք պակաս շեն քաղաքին չորս կողմէր, բայց տեղափոխութիւնը գժուարին է։ Այս պատճառաւ։ յաւ սալայտակաց շինութիւնք բազ-մածախ կ'ըլլան։ Նոյնը կրնանք ըստել նաև վառելափայտի համար, որ սաւզի կը նասի, էշերու վրայ ստիպուելով բառնալ ու տեղէ տեղ փոխազերել։

Երկար ճամբայ մը լինել տուին մեզ անձով, քարուու ու սահուն փողոց-ներու միջէն ինչուան վաճառանոցն երթալու համար։ Քայլելու ամենա-մեծ գժուարութիւն կրելով՝ ես ինձ կը հարցընէի թէ որպիսի՝ զարմանալի հաւասարակշռութեամբ թաթար կանայք, պնակէս քօղածածուկը, կրնան քայ-լել այս ճանապարհաց վրայ իրենց մուճակներով, յօս հազիւ մատուշնուն ծայրերը կը մտնեն։

Բայց ամենէն աւելի աշքի զարնողը հայ տիկնանց տարազն է, որ թէ սկզբնաշնորհ և թէ ասրօրինակ է միանգամայն։ Այս եղանակին՝ գեռ ևս իրենց ձմրան զգեսաներովն են. անհաճոյ ձև ունեցող տարաս մը ու կա-նաչ մետաքսէ շրջազգեստ մը վրան՝ բոլոր հասակին երկայնութեամբ, զար կ'ամփոփէ նոյնակս մետաքսեայ գոտի մը, վրան մթնագյն մնչշտափով։ հան-գիստ սարազ մը, բայց ոչ այնչափ վայելուչ կամ չնորհալից, Մասնաւոր մուաղղութեան արժանի կրնայ համարուիլ իրենց զլխակապն։ Բաց ի այլ և այլ թաշկինակներէ, որոց ճիշգ թիւը չի կրցաց ստուգել, պասկաձե ապարօշ մալ

կը կրեն, պրամիերով զարդարուած՝ որ ճակախն վրայ կ'իյնան։ Պաստառ մը կը ծածկէ բոլորը, և վզին չօրս կողմը կը պատի. դէմքին ստորին մասն ալ ճերմակ պաստառով՝ մը մինչեւ ի քիթն։ և երեսի ստորին մկանանց այս յարատեակ ճնշումը՝ վերջապէս կրնայ պատճառել զծիւրութիւն առ ոմանն։ Ճնէն դուքս՝ զիմբունն և ուսոց վրայ սպիտակ քող մը կ'անցընեն, նորաձեւ ճարմանին սեղմերով զայն։ Այս ասարազ աելի սովորական է տարիցնին առած կանանց համար. նոր մերունվը ընդհանրապէս հակամէտ է ի թօթափել ծանր և ոչ այնչափ համելի զգեասներն, թիֆլիզեան վայելուշ և ճոխ նորաձեւ ութեամբք փոխանակելով։ Շոշէի ժերունիք անասնոց մուշտակով շինուած բարձր պամացը զիմբանոց մը կը գործածեն, ուր երիտասարդաց փափախը աելի ցած է. և մայելած։

Քիաղաքիս յաստոկ նորութիւն մ'ալ՝ պպտի էշերու բազմաթիւ կարաւանքնեն, անդապր ի շշագպատմեան փայտի ու մացառաց բեռամբը՝ ճանապարհաց անհարթութեան, եւելիթից և անհանդուրթելի սալյայատակաց համար անկարելի ըլլալով անուաւոր կառաց գործածութիւնն, ամէն փոխադրութիւնք էշերու, չորեաց և երիսլարաց միջոցան կ'ըլլան։ Երբեմն այնչափ ծանրաբեռնած են էշք՝ որ խեղճ մարմիննին բոլորովին կը ծածկուի գեռ տերեւաւլից մացառաց խոշոր բեռան տակ։ Շոշէիցից վառելու համար՝ փայտէ զատորից նիւթոց կիրառութեան սոլյուրութիւնը չունին։ Զուրն ալ կը վաճառուի և էշերով տուները կը բայխուի, երկու տափարակ ու թմբուկի ձև ունեցող տակառիկ բեռուցներով վրանին, որոց ամէն մէկը երեսաւն լիստ ջրոյ կը բռվանդակէ ու տասն կոպէկի կը վաճառուի, որով բազմաթիւ ընտանեաց ծախոց մէջ այս մասն եեթ բաւական կարեւոր գումար մը կը ձևացընէ։ Ըմպէլի ջրոյ նուազութիւն է ի Շոշի, և կը մատակարարուի աղբերբք՝ որ շորս միայն են ի քաղաքին։ Թաթարք հորի ջուր կը խմեն, և այն պատճառաւ յաճախութիւն է ժանտաստենիք իրենց բնակալայր փողոցաց մէջ։

Մէյտան կոշտած հրապարակէն անցած տաեննիւ՝ աշքիս կը հանդիսի պըզափի ու սիրուն քած շնիկ մը, լաճի մը ձեռքը, զոր կ'ուզէ վաճառել։ Յավհաննէսին ականջէն կը փափամ որ գնէ. և առուտուրը կը կնքուի՝ քսան և հինգ կոպէկի ծանր զնոլ։ Քանի մը վայրիկնէն հիւրանցնիս կը բերուի այդ նոր սոտցուածք. որ թէպէտ գեռ խիսա պպտի, բայց կը յուացընէ ժամանակաւ ընտիր պահապան մը ըլլալ, զի հուսական շանց ահաւոր ցեղէն է, որ վայրագագոյնք են քան զզայլս։ Շոշէկդ կը կոշեմ զնա, յիշատակաւ տեղոյն ուր ստացաւ։

Մէյտանին մօտ Հայոց եկեղեցի մը կայ՝ նոր շինութիւն, գեղեցիկ նիւթերով, և ըստ ձեռյ բիւզանդական եկեղեցեաց Անոյ։ Ներքին կողմանէ՝ յատակը ընտիր կապէրսներով ծածկուած է. ունի սրբոց պատկերներ, նըշխարք և հին աւետարաններ, զորս հաւատացեալք երկիւրածութեամբ կը համբուքին ամէն ելլի մոնելնուն։ Հայոց եկեղեցեաց մէջ՝ կանանց և արանց տեղուանք իրարմէ զատուած են. իսկ զանգակատունն պրեթէ միշտ որիշ և յեկեղեցւոյ, կամ զիմացը և կամ կողմնակի շինուած։

Ոչ նուազ հետաքննական է կանանց յեկեղեցոյ դուռ ելլելու տեսարանը յաւարա աստուածային պաշտամանց : Ումանց իրենց հին տարազով որ ինչպէս ըսինք՝ ծանր է և ոչ այնշափ հաճոյատեսիլ . իսկ օրիորդք և նորահականացնայք՝ եւդուպական ձևով և ճոխովթեամբ , բաց ի զիխանոցէն որ թաւշեայ պասկ մ'է ակունքով կամ բանուածքով գորդարուած , ու կը հանգի ճակտին վրայ , նոյնպէս ասղնէգործ թեթև շարշէ քողով մը ծածկուած : Շատերն այս պասկին վրայ բաց գունով թաշկինակ մը անցընելով կղակին տակ կը հանգուցն , որով առանց մեծ պյանաց զուինին կը պահապանէն :

Հայուհիք ընդհանրապէս գեղադիմ են և հաճոյատեսիլք , և առանց ունելց վրացի կանանց անհոգ կերպը , եռանդուն են բնութեամբ ...

Առաւել քան ի թիֆլիս զգալի է ի քաղաքիս աղամինեաց նուազովթինը , և գարմանայի կը թուի գաղղիունոյ մը՝ որ վարժած է սնուցչաց և մանկանց սպասկաց , տեսնել նորահակ մայրեր՝ առջևնին ձգած ի փողոցի խեղճ ծառայք որ իրենց բազկաց վրայ կ'որրեն լալիան տղեկներ :

Շարայարելի

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԳԻՐԱ ՄԱՆՈՒԺԵԱՆ ՑԻՍՈՒԽՄԻ :— ՆԻԿ . ՄԱԼԻ ՀԱՅԱԴԻՑԻՆ

Հ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԱՅՍ ԳՐՈՒԱԾՔԻՆ ՎՐԱՅ

ՈՉ անձանօթ է բանասիրաց որ կին և միջին մատենազրութիւն մեր՝ ի թիւս այլոց սննհարազատ կամ անվաներ գրոց աստուածառնչ գրոց կամ անկէ դուրս , աւանդած և հասուցած է առ մեզ նաև թիստափ մանկութիւն կոչուած գրութիւն մը՝ բազմահմտուա տառւցշապետն Պետրպուրդի կայսերական համալսարանին հայագէտն Մառ , իր Ամառնային ուղեւորութիւն ի Հայատան , ծանօրութիւնը և քաղուածքի հայկական ձեռագրաց գրուածքին մէջ , զոր սուս արևելապէտ ընկերութեան բանտսիրականի մը մէջ հետզինտ կը հրատարակէ , այդ հետսպինների անհարազատ երգասիրութեան վրայ հետևեալ տեղեկութիւններն տուած է , զոր համառօտելով կը թարգմանենք , բնադրին ինզուին անծանօթ մեր ազգային բանասիրաց ընծայելով :

Սարգիս Շնորհալի , մատենագիր երկուասաներորդ գարու , ի թիւս անընդունելի կամ անհարազատ գրոց կը յիշատակէ և զՄանկութիւն քրիստոնուի (1) . իսկ Անեցին Մխիթար որ հետեւալ երեքտանաներորդ գարու մէջ մատենագրած է , կը պատմէ (2) թէ Բ(ա) խիրա ընթերցաւ Մուհամմէտի այն գերքը՝ զոր

1. Մատենագրատան հայկական բարգմանուրեանց , յ'Էջ 195 , ժանօթ :
2. Մխիթարաց Անեցոյն պատմութիւն . ի լոյս ած Ք. Պ. Ա. Գետրպուրդ . յ'Էջ 36 :